

Հայ ժողովրդի պատմության
Ժամանակագրություն

1831 հունիս 2 Ցարական հրամանագրով վերացվում են տարանցիկ առևտրականների արտոնություններն Անդրկովկասում:

սեպտեմբեր 6 Կ. Պոլսում ծնվեց բանաստեղծ և հասարակական գործիչ Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ): (Վախճ. 1892թ.-ին):

հոկտեմբեր 22 Կ. Պոլսում ծնվեց հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, «Մեղու» պարբերականի խմբագիր Հարություն Սվանյանը: (Վախճ. 1874թ.-ին):

1832 հունվար 14 Երևանի գավառական դպրոցի բացումը:

մայիս 27 Եգիպտական բանակը Իբրահիմ փաշայի զլխավորությամբ ջարդեց թուրքական զորքերին, գրավեց Հայկական Կիլիկիայի դաշտային մասը:

1833 փետրվար 27 Հայկական մարզի գինանշանի հաստատումը Նիկոլայ Ի-ի կողմից:

մայիս 4 Նոր Նախիջևանում ծնվեց նշանավոր հայագետ, արևելագետ Քերովբե Պատկանյանը: (Վախճ. 1889թ.-ին, Պետերբուրգում):

հունիս 23 Ցարի հրապարակած նոր օրենքով փոփոխություններ են մտցվում հայկական մարզի վարչական կառուցվածքում:

հունիս 26 Հունքիար-Իսքելեսիի պայմանագրի ստորագրումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

հուլիս 1 Հիմնվում է «Անդրկովկասի բարենորոգման հատուկ կոմիտե»՝ զինվորական մինիստր Չերնիշևի նախագահությամբ:

հուլիս 2 Վենետիկում վախճանվեց հայագետ, աշխարհագրագետ Ղուկաս Ինճիճյանը: (Ծնվ. 1758թ.-ին):

հուլիս 2 Ձմյուռնիայում ծնվեց անվանի հրապարակախոս և թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրյանը: (Վախճ. 1923թ.-ին):

1834 մայիս 24 Նոր Նախիջևանում սպանվեց Հարություն Ավանդարյանը: (Ծնվ. 1796թ.-ին, Աստրախանում):

մայիս 31 Կ. Պոլսում հիմնվում է ս. Փրկչյան Ազգային հիվանդանոցը, որը գործում է առ այսօր:

սեպտեմբեր 4 Պաղուայում (Հյուսիսային Իտալիա) իր առաջին տարեշրջանը սկսեց Մխիթարյանների հիմնած Մուրադյան վարժարանը:

հոկտեմբեր 14 Կ. Պոլսում ծնվեց հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը: (Վախճ. 1887թ.-ին, Փարիզում):

1835 սեպտեմբեր 5 Կ. Պոլսում ծնվեց գրող, հրապարակախոս, թարգմանիչ Արմենակ Հայկունին (Համբարձում ճիզնեճյան): (Վախճ. 1866թ.-ին):

1835 սեպտեմբեր 5 Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում ծնվեց հայ մեծ վիպասան Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան): (Վախճ. 1888թ.-ին, Թիֆլիսում):

սեպտեմբեր 5 Մսևկայում ծնվեց հայագետ Կարապետ Հարությունի եղանը (եղով): (Վախճ. 1905թ.-ին, Պետերբուրգում):

1836 մարտ 11 Նիկոլայ Ի-ը վավերացնում է Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու կանոնադրությունը «Պոլոժենիե»:

սեպտեմբեր 11 Վենետիկում բացվեց մխիթարյանների Ռաֆայելյան վարժարանը:

սեպտեմբեր 11 Կ. Պոլսում ծնվեց կոմպոզիտոր, հայկական առաջին օպերայի ստեղծող Տիգրան Չուխաճյանը: (Վախճ. 1898թ.-ին, Ձմյուռնիայում):

1837 հունվար 28 Կ. Պոլսում ծնվեց բանասեր, Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը: (Վախճ. 1884թ.-ին):

փետրվար 22 Հայկական եկեղեցական բարձրագույն խորհրդի Սինոդի հիմնումը Եջմիածնում:

մարտ 7 Ծնվեց դերասան, ռեժիսոր, դրամատուրգ Գևորգ Չմշկյանը: (Վախճ. 1915թ.-ին):

մարտ 13 Անդրկովկաս է գալիս սենատոր Գանը՝ երկրամասն ուսումնասիրելու և ռեֆորմների նախագիծ կազմելու նպատակով:

մայիս 1 Բացվում է Երևանի կոնսիստորիան:
հունիս 3 Աշտարակում ծնվեց ակադեմիկոս վիպասան Պերճ Պռոշյանը: (Վախճ. 1907թ.-ին):

հունիս 21 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դիրիժոր Տիգրան Չուխաճյանը: (Վախճ. 1898թ.-ին):

օգոստոս 7 Թուրքական բանակը Ալաջա-դաղի բարձունքներում ճակատամարտ տվեց և հպատակեցրեց քրդական ցեղերին:

սեպտեմբեր 2 Երևանում իր գործունեությունն է սկսում հայոց հոգևոր թեմական դպրոցը:

հոկտեմբեր 4 Գյումրին վերանվանվում է Ալեքսանդրապոլ (խորհրդային տարիներին՝ Լենինական, անկախությունից հետո՝ Կումայրի անվանումով):

հոկտեմբեր 13 Հայաստան է այցելում ռուսական կայսր Նիկոլայ Ի-ը:

դեկտեմբեր 5 Թիֆլիսում վախճանվեց հայագետ Հակոբ Շահեն-Ջրպետյանը: (Ծնվ. 1772թ.-ին Ուրֆայում):

դեկտեմբեր 5 Մոլդովայի Բողուշան քաղաքում ծնվեց հայագետ Ստեփաննոս Պալասանյանը: (Վախճ. 1889թ.-ին, Եջմիածնում):

1838 մայիս 10 Ծնվեց պետական գործիչ, ազգերի լիգայի հիմնադիր Վիկոնտ Ջենս Բրայսը: Նա աշխատում էր Վիլհամ Գլադստոունի օրոք, գրում էր իրավագիտության և քաղաքագիտության վերաբերյալ հոդվածներ: Ջենս Բրայսը բարձրաձայն դադապարտում էր Թուրքական կառավարության կողմից իրագործված հայկական ցեղասպանությունը: (Վախճ. 1922թ.-ին):

հունիս 22 Շուշում բացվում է հայոց հոգևոր թեմական դպրոցը:

սեպտեմբեր 13 Սկյութարի ճեմարանի բացումը Կ. Պոլսում:

1839 հունիս 12 Նիզբեի տակ (Հյուսիսային Սիրիա) թուրքական բանակը ջախջախվում է եգիպտական փոխարքայի զորքերի կողմից:

նոյեմբեր 3 Գյուլիսանեի Հաթթը-Շերիֆ կոչվող հրովարտակի («Թանգիմաթ») հրատարակումը Աբդուլ Մեջիդի կողմից:

1840 ապրիլ 5 Բուլնիս-Խաչեն գյուղում ծնվեց նշանավոր մանկավարժ, գրող, հրապարակախոս Ղազարոս Աղայանը: (Վախճ. 1911թ.-ին):

ապրիլ 10 Հայկական մարզի վերացումը կազմվում են Վրացա-իմերեթական նահանգը և Կասպիական մարզը:

օգոստոս 10 Ձմյուռնիայում սկսում է լույս տեսնել «Վրչալույս Արարատյան» պարբերականը՝ Պաթազարյանի խմբագրությամբ:

դեկտեմբեր 12 Վանում ծնվեց բանահավաք, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գարեգին Սրվանձտյանցը: (Վախճ. 1892թ.-ին, Կ. Պոլսում):

1841 փետրվար 11 Կ. Պոլսում ծնվեց բանասեր, պատմաբան Սալաքիա Օրմանյանը: (Վախճ. 1918թ.-ին):

ապրիլ 6 Հակամարտության «Միական» ընկերության ստեղծումը Կ. Պոլսում:

հուլիս 1 Լոնդոնի կոնվենցիան սևճովյան նեղուցների ռեժիմի վերաբերյալ: Դարդանելը և Բոսֆորը փակ են հայտարարվում բոլոր տերությունների, այդ թվում Ռուսաստանի նավերի առջև:

հուլիս 10 Ձմյուռնիայում բռնկված հրդեհին զոհ են գնում հայկական փայտաշեն երկու թաղամաս:

օգոստոս 24 Կոստանդնուպոլսի 3000 արհեստավորների հակասուլթանական և հակաամիրայական ցույցը:

սեպտեմբեր 18 Կ. Պոլսի արհեստավորները նոր ցույց են կազմակերպում:

հոկտեմբեր 3 Ամիրաները փակել են տալիս Սկյութարի ճեմարանը:

նոյեմբեր 9 Կ. Պոլսի արհեստավորները ցույց են կազմակերպում ամիրաների և պատրիարքի դեմ:


դեկտեմբեր 12 27 արհեստավորներից բաղկացած վարչություն է ստեղծվում, որին և Բ. Դուռը հանձնարարում է Սկյութարի ճեմարանի խնդրի կարգավորումը:

(Շարունակելի)

Լուրեր

Իրանահայ համայնք

Իրաւաբան Ալբերտ Բեռնարդին Իրանի Իրավաբանների կենտրոնական կազմակերպության միջազգային գործերի հանձնախմբի նախագահ



Իրավաբան Ալբերտ Բեռնարդին վերընտրվել է Իրանի Իրավաբանների կազմակերպության մեջ գործերի հանձնախմբի նախագահ, որին անդամակցում են փորձառու իրավաբաններ եւ համալսարանի դասախօսներ:

Նա այդ պաշտոնը վարում էր երկու նստաշրջանում՝ անցյալ 4 տարիների ընթացքում: Իրանի Իրավաբանների կենտրոնական կազմակերպությանը անդամակցում են շուրջ 8000 իրավաբաններ եւ փորձնական շրջանի իրավաբանության արտոնություն ստացող թեկնածուներ:

ասել է Խաթամին: Նա նշել է նաեւ, որ այցի ընթացքում անցկացվել է Իրանի տնտեսական եւ արտադրական նվաճումների ցուցահանդես Իրանի մասնավոր սեկտորի մասնակցությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՆԻ ՆՈՐ ԴԵՍՊԱՆՆ Ե ԱԼԻՌԵՉԱ ՀԱՂԻՂՅԱԼԸ

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության Նոր դեսպան է նշանակվել Ալիռեզա Հաղիոյանը, այս մասին «Ազգը» տեղեկացավ վստահելի աղբյուրներից: Ենթադրվում է, որ Նորանշանակ դեսպանն այսօր կժամանի Երեւան: Մեր ունեցած տեղեկությունները մեծարգո դեսպանի մասին սուղ են. նշենք, որ պրն Հաղիոյանը հմուտ դիվանագետի համարում ունի, երկար տարիներ եղել է Իրաքում Իրանի հավատարմատարը (իրաք-իրանյան պատերազմից հետո Թեհրանը Բաղդադում ներկայացված է եղել հավատարմատարի մակարդակով): Փաստորեն, մինչեւ վերջերս Հաղիոյանը եղել է Բաղդադում Իրանի դեսպանը՝ հավատարմատարի աստիճանով: Հաղիոյանը ծնվել է Սպահանում, ազգությամբ պարսիկ է:

Հաղիոյանը դառնում է Հայաստանում Իրանի երրորդ դեսպանը: Մինչ այդ, 1999-2004 թթ. դեսպանը Մոհամմադ Ֆարիադ Զոլեյկին էր (1992-1995 թթ. եղել է փոխդեսպան, իսկ 1998-1999 թթ.՝ ժամանակավոր հավատարմատար Երեւանում), իսկ դրանից առաջ՝ Համիդռեզա Նիքբար Էսֆահանին (1995-1998 թթ.):

Իրան

ԽԱԹԱՄԻՆ ԿԱՐԵՎՈՐԵԼ Ե ԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՅՅԸ

ԹԵՐՐԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամին իր Հայաստան, Բելառուս եւ Տաջիկստան կատարած մեկ շաբաթյա ուղեւորությունից վերադառնալուց հետո, Թեհրանի օդանավակայանում լրագրողների հետ զրույցում այս այցերի արդյունքները գնահատել է դրական: Համաձայն «Իրիբ» գործակալության, Խաթամին իր Հայաստան կատարած այցը, գնահատել է կարեւոր եւ ավելացրել, որ այցի ընթացքում համագործակցության բոլոր ոլորտներում բազմաթիվ բանակցություններ են վարվել: Նա այդ բանակցություններից առավել կարեւորել է Իրանից Հայաստան գազի արտահանումը էլեկտրաէներգիայի դիմաց: ԻԻՀ նախագահը նշել է նաեւ Զաջարանի թունելի կարեւորությունը Հայաստանի եւ տարածաշրջանի եւ հատկապես Հյուսիս-Հարավ միջանցքի համալրման համար, որը կոյուրացնի հաղորդակցությունը եւ առեւտուրը: «Բարեբախտաբար երկու երկրները ստորագրեցին համագործակցության փաստաթուղթ այդ թունելի կառուցման խնդիրները լուծելու վերաբերյալ»,

Շայաստան

Հայաստանի տարի՝ Ֆրանսիայում

ԵՐԵՎԱՆ - ՀՀ նախագահ Ռոբերտ Զոհարյանի ս.թ. ապրիլի 25-27-ին Ֆրանսիա կատարած աշխատանքային այցի ժամանակ Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահների միջեւ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ 2006-2007 թթ. Ֆրանսիայում անցկացնել Հայաստանի տարի: Այդ կապակցությամբ ամիսներ շարունակ Փարիզում եւ Ֆրանսիայի այլ քաղաքներում կկազմակերպվեն ցուցահանդեսներ, համերգներ, թեմատիկ փառատոններ, այլ միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի մշակույթին ու պատմությանը, անցյալին ու ներկային՝ բացառիկ հնարավորություն ընձեռնելով բազմակողմանիորեն ներկայացնել հայ մշակութային ժառանգության արժեքները: Ֆրանսիայում Հայաստանի տարի անցկացնելու փաստը, որն արդյունք է Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ լայնածավալ եւ բազմաշերտ համագործակցության, մեկ անգամ եւս նշանավորում է մեր երկրների միջեւ հաստատված հարաբերությունների բարձր մակարդակը:

«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՅԱՎԱՏ ԵՎ ՊԱՏԻՎ»



Սա է Ալբերտ Ազարյանի էությունը, որին երեկ հանձնվեց ԹՄՍ շքանշանը

Նման բնորոշմամբ իր ողջույնը հղեց ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը երեկ «Առնո Բաբաջանյան» փոքր համերգասրահում սպորտի վաստակավոր վարպետ, օլիմպիական խաղերի եռակի, Եվրոպայի եւ աշխարհի բազմակի չեմպիոն, «օղակների արքա», փառաբանված մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանի 75-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյում: Անվանի դերասանը նշեց նաեւ. «Մենք սերնդակիցներ ենք: Չարմանալի է, որ նրա սերնդակիցները միանգամից պոռթկացին գիտության, արվեստի եւ սպորտի բնագավառում: Ալբերտ Ազարյանն ազնվական է իր էությամբ, մեծ մարզիկ, հրաշալի մարդ: Ազարյանի հաղթանակները գրանցված են հայոց պատմագրության մեջ, անշնչելի հետք են թողել ինչպես Ավարայրի, Սարդարապատի ճակատամարտերը»:

Չերմ եւ հանդիսավոր մթնոլորտում անցած հոբելյանական երեկոյին ներկա էր նաեւ ԶԶ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: «Մեզ համար մեծ պատիվ է նշել մեր ժողովրդի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ սպորտի ասպետի 75-ամյակը: Մարդ, որով հպարտանում է ամբողջ ժողովուրդը, որը դաստիարակել է սերունդներ, բարձր է պահել հանրապետության մարզական պատիվը, օրինակ է ծառայել մատաղ սերնդի համար: Հոբելյարին ցանկանում եմ առողջություն: Ինձ թվում է, որ նա ոչ թե 75, այլ 60 տարեկան է՝ լեցուն եռանդով: Կառավարության կողմից ջերմորեն շնորհավորում եմ Ալբերտ Ազարյանին», իր ողջույնի խոսքում նշեց ԶԶ վարչապետը՝ «Լադա» մականիշի մեքենայի բանալիները հանձնելով հոբելյարին:

Սպորտպետկոմի նախագահի տեղակալ, ՀԱՕԿ-ի փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Իսախյանն իր ողջույնի խոսքում հակիրճ անդրադարձավ անվանի մարզիկի անցած մարզական փառահեղ ուղուն: Իր առաջին հաջողության

Ալբերտ Ազարյանը հասել է 1952 թ. դեկտեմբերին օղակների վրա վարժությունում նվաճելով ԽՍՀՄ չեմպիոնի կոչումը՝ առաջ անցնելով օլիմպիական չեմպիոն Հրանտ Շահինյանից, որն այդ աննախադեպ հաջողության առթիվ առաջինը շնորհավորեց իր կրտսեր գործընկերոջը: 1954 թ.-ին Հռոմում Ազարյանն աշխարհի չեմպիոնի առաջին ոսկե մեդալը նվաճեց կրկին օղակների վրա վարժությունում: Իսկ 2 տարի անց Մելբուռնի ամառային 16-րդ օլիմպիական խաղերում նվաճեց երկու ոսկե մեդալ: 1960 թ. Հռոմում կայացած հաջորդ օլիմպիական խաղերում Ազարյանը կրկին իրեն հավասարը չունեցավ՝ արժանանալով օլիմպիական երրորդ ոսկե մեդալին: Նա Հայաստանի միակ մարզիկն է, որն օլիմպիական խաղերում նվաճել է երեք ոսկե, մեկ արծաթե մեդալ: Անվանի հոր հետքերով գնաց նաեւ նրա որդին՝ Էդուարդ Ազարյանը, որը տարիներ անց կրկնեց Ալբերտ Ազարյանի նվաճումը՝ դառնալով օլիմպիական չեմպիոն: Մարզական իր հարուստ կենսագրությունում ՀԱՕԿ-ի պատվավոր նախագահ, Երեւանի պատվավոր քաղաքացի, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ, իր անվամբ մարմնամարզության դպրոցի տնօրեն Ալբերտ Ազարյանը տարբեր մրցասպարեզներում նվաճել է 45 ոսկե, 42 արծաթե եւ 10 բրոնզե մեդալ: Ի դեպ, Վանաձորի խաղային մարզաձեւերի մարզադպրոցն օրերս անվանվել է Ալբերտ Ազարյանի անվամբ:

Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը հոբելյարին դիմեց հետեւյալ խոսքերով. «Ալբերտ Ազարյանի հաջողություններն ու հաղթանակները լոկ մարզական չեն, դրանք մեր ազգային հաղթանակներն են, մեր մշակութային հաղթանակները, ոչ թե անցյալ կատարյալ, այլև ներկա եւ ապագա ժամանակների համար են»: Շնորհավորելով հոբելյարին, Ռուբեն Միրզախանյանն Ալբերտ Ազարյանին հանձնեց Թեքեյան մշակութային միության բարձրագույն պարգևը՝ ադամանդակուռ «Արարատ» շքանշանը:

Չերմ եւ հուզիչ էր Ազարյանի պատանեկության ընկեր, ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանի խոսքը, որն ավարտվեց Սուրեն Գյանջումյանի հետ պարողջույնով: «Օղակների արքային» իրենց ողջույնի խոսքերը հղեցին նաեւ Երեւանի քաղաքապետի տեղակալ Արման Սահակյանը, որը խոստացավ տարեկան 10 մլն դրամով ավելացնել Ալբերտ Ազարյանի մարզադպրոցի բյուջեն: Նա քաղաքապետարանի կողմից հոբելյարին նվիրեց տեսախցիկ: ԶԶ կրթության եւ գիտության նախարար Սերգո Երիցյանը հանձնեց հուշամեդալ: Համո Սահյանի բանաստեղծությամբ հոբելյարին իր ողջույնի խոսքը հղեց անվանի ասմունքող Վլադիմիր Աբաջյանը, իսկ Պապին Պողոսյանը երգով ողջունեց Ալբերտ Ազարյանին: Երեկոյի ընթացքում իրենց ելույթներով հոբելյարին ողջունեցին «Հայ աստղեր» պարային համույթը, ակրոբատներն ու գեղարվեստական մարմնամարզուհիները:

Վերջում շնորհակալական խոսքով ներկաներին դիմեց անվանի մարմնամարզիկը: Նա իր

շնորհակալությունը հայտնեց հոբելյանական երեկոյի բոլոր մասնակիցներին, ՀՀ վարչապետին, սպորտպետկոմի եւ ՀԱՕԿ-ի նախագահ Իշխան Չաքարյանին՝ ծննդյան 75-ամյակը մեծ հանդիսությամբ կշելու համար:

Արցախ

ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՅԱՆՈՒՄ

«Հայկական ակնաբուժական նախագիծ» ամերիկյան բարեգործական կազմակերպությունը, որի առաքելությունը ձեռքբերովի կուրության կանխարգելումն է Հայաստանում եւ Արցախում, իր իսկ ծրագրի շրջանակներում այս տարվա մայիսի 17-ից հունիսի 18-ը Արցախի տարածքում առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացնում է աչքի անվճար հետազոտություններ, որոնք անցկացնում են 2 հետազոտող խմբեր: Մի խումբն աշխատում է Ստեփանակերտում՝ հետազոտելով մայրաքաղաքի, Ասկերանի եւ Շուշիի շրջանների բնակչությանը, երկրորդ խումբը հետազոտություններ է անցկացնում հանրապետության մյուս շրջաններում: Ընդ որում, դրանք կատարվում են առանց հաճախորդների տարիքային սահմանափակման:

1992 թ. ԱՄՆ-ում հիմնադրված «Հայկական ակնաբուժական նախագիծն» առ այսօր համագործակցում է Երեւանի Ս. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի հետ: Սկզբնական շրջանում դա դրսևորվում էր միայն տեխնիկական՝ սարքավորումների, դեղորայքի հատկացմամբ, ինչպես նաեւ մասնագիտական օգնությամբ: Այժմ ընդլայնելով համագործակցության շրջանակները՝ իրականացնում է նաեւ մասնագետների վերապատրաստում ու ուսուցում: Նշված ժամանակահատվածում վերապատրաստվել են ավելի քան 100 բժիշկներ:

Ծրագրի հաջորդ փուլում ընդգրկված է նաեւ Արցախը, այսօր ԼՂՀ-ում կան ակնային վիրահատություններ կատարելու հնարավորություններ: Երկու տարի առաջ աչքի շարժական հիվանդանոց է բերվել Հայաստան, ու գործնական արտահայտություն է ստացել բուժօգնությունների կազմակերպումն արդեն տեղերում, այդ թվում՝ Արցախում:

Անցած օրերին Երեւանի Ս. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի տարբեր բաժանմունքների ղեկավար բժիշկների հետ Արցախում էր ՀԱՆ-ի ղեկավար, ամերիկաբնակ պրոֆեսոր Ռոջեր Հովհաննիսյանը: Նրա հետ ժամանել էին ամերիկացի այլ ակնաբույժներ: Ռ. Հովհաննիսյանը, որը 5-րդ անգամ էր այցելել Արցախ, գոհունակություն հայտնեց այստեղ ակնաբուժության ոլորտի դրական տեղաշարժի առիթով: «Գնալով լավանում է իրավիճակը, նույնն ասում են նաեւ ամերիկացի իմ գործընկերները: Ես տեսնում եմ, որ այստեղի բժիշկները ավելի են հմտանում», նշել է նա:

Ամերիկահայ ակնաբույժի կարծիքով, խնդիր է դրված Արցախում նախ եւ առաջ զարգացնել ակնաբուժական առաջնային օգնությունը, ինչպես նաեւ ստեղծել մասնագետների լայն ցանց:

Դիաբետիկ հիմքով ակնային բարդությունները Արցախում շատ ավելի արտահայտված են, որը պայմանավորված է սթրեսներով, ինչն էլ պատերազմի հետեւանք է:

Նշվեց նաեւ անիրագեկության պատճառով հասարակության անբավարար ուշադրությունը: Պրոֆեսոր Մալայանի խոսքերով, եթե գլաուկոմայի առումով բնակչության բժշկական գիտելիքների մակարդակը ինչ-որ չափով ձեւավորված է՝ անցյալ ժամանակներից պրոֆիլակտիկ միջոցառումների շնորհիվ, ապա այլ է վիճակը դիաբետիկ հիմքով ակնային հիվանդությունների առումով: Ակնային պրոբլեմները ավելի հեշտ է ախտորոշել նախնական շրջանում եւ կիրառել ճիշտ բուժում: Նշելով այս մասին՝ պրոֆ. Մալայանը նկատեց, որ եթե Արցախի հետ իրենց համագործակցության առաջին տարիներին գերակշռում էին աչքի վնասվածքները, հատկապես՝ ռազմական եւ դրանց հետեւանքները, ապա ներկայումս առավել շատ զգացնել են տալիս անոթային հիվանդությունները, որոնք էլ համարվում են առաջնակի անվերադարձ, ոչ բուժելի կուրության պատճառը: Պրոֆեսորի խորհրդով՝ հարկ է քառասուն տարեկանից հետո գոնե տարեկան մեկ անգամ այցելել մասնագիտական ախտորոշիչ ծառայություններ, ինչը, դժբախտաբար, չի արվում:

Արցախում գտնվելու ժամանակ Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի մասնագետները տնօրենի գլխավորությամբ եւ պրոֆեսոր Ռոջեր Հովհաննիսյանի ու ամերիկացի ակնաբույժների մասնակցությամբ կազմակերպեցին սեմինար Արցախի ակնաբույժների համար:

Ըննարկված խնդիրները օգտակար էին այս բնագավառում հետագայում ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

Իսկ ամենալավ գնահատականը տալիս են հենց իրենք՝ հաճախորդները, որոնց կարծիքը ակնաբուժական այս անվճար ծառայությունների մասին բացառապես դրական է:

Շայնց Սփյուռք

ԱՄՆ ԱՄԵՐԻԿԱՅԸ ՊԱՐԳԵՎ ՀԱՆՁՆԵՑ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն Սփյուռակ տանը ԱՄՆ բարձրագույն քաղաքացիական պարգևը՝ Ազատության նախագահական մեդալը, հանձնել է ամերիկահայ պատմաբան եւ մանկավարժ, Զարնեգիի բարեգործական կորպորացիայի ղեկավար Վարդան Գրիգորյանին:



Պարզեւատրման վերաբերյալ հրամանագիրը Ջորջ Բուշը ստորագրել է մի քանի օր առաջ:

ՍՏԵՂԾՎԵՑ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասը տարիներին Իսրայելում բնակություն հաստատած հայաստանցիներն օրերս հավաքվել են Բատյամ քաղաքում՝ նշելու հայկական նոր կազմակերպության ծնունդը: Իսրայելում Հայաստանի հյուպատոս Ցուլակ Մումճյանն այդ առիթով քաղաքի ռեստորաններից մեկում հյուրասիրություն է կազմակերպել, որին մասնակցել են Ռուսաստանում Հայաստանի դեսպան Արմեն Սմբատյանը եւ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ներկայացուցիչները:

Իսրայելի հայերի միության ղեկավար է ընտրվել արթիկցի Աբրահամ Չոփիկյանը: Նա ասել է, որ միության գլխավոր նպատակը Իսրայելում բնակվող հայաստանցի ընտանիքներին օգնելն է, քանի որ վերջիններս դժվարություններ են կրում հատկապես աշխատանք գտնելու հարցում: Հայ-իսրայելական առևտրային հարաբերությունների հետագա զարգացմանն աջակցելը նույնպես միության հիմնական նպատակներից է:

Միջազգային

ԱՄՆ-Ի ԵՎՍ ՄԻ ՆԱՀԱՆԳ ՃԱՆԱԶԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՇԻՆԿՏՈՆ, 31 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: ԱՄՆ-ի Վերմոնտի նահանգի նահանգապետ Ջեյմս Դուգլասը հրապարակել է հռչակագիր, որում նշված է Թուրքիայում հայերի ցեղասպանության 89-րդ տարեդարձը:

Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի հաղորդման համաձայն, Վերմոնտը դարձել է 37-րդ նահանգը, որը ճանաչել է հայերի ցեղասպանությունը եւ միացել ԱՄՆ-ի հայկական համայնքին ու բոլոր այն մարդկանց, ովքեր հարգել են այն 1,5 միլիոն հայերի հիշատակը, ովքեր Թուրքիայում սպանվել ու տանջամահ են արվել 20-րդ դարասկզբին:

2005 Թ. ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՄՆ-ԻՑ ՀԱՄԱԶՉՓ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին օժանդակությունների ենթահանձնաժողովը եկող տարվա բյուջեի մասին որոշում կայացնելիս համաձայնության է եկել, որ 2005 թվականին Հայաստանին եւ Ադրբեջանին տրվելիք ռազմական օժանդակությունը պիտի հիմնված լինի հավասարության սկզբունքի վրա, հակառակ Բուշի վարչակազմի ծրագրերին, որով նախատեսվում էր Ադրբեջանին հատկացնել Հայաստանից 6 միլիոն դոլարով

ավելի օժանդակություն: Ինչպես Ամերիկայի հայկական համագումարի Լոս Անջելեսի գրասենյակի պատասխանատուն ասել է «Ազատության» թղթակցին, անցյալ տարի այս հարցի վերաբերյալ շտապողականություն է դրսևորվել ԱՄՆ նախագահի գրասենյակի կողմից, եւ հայկական լոբբիինգը չի հասցրել կատարել համապատասխան դեր, որի հետեւանքով Հայաստանը Ադրբեջանի համեմատ 6 միլիոն դոլարով պակաս օժանդակություն է ստացել: Այսպիսով Հայաստանը եւ Ադրբեջանը եկող տարի ստանալու են ռազմական բնագավառում հավասար՝ 5-ական միլիոն դոլարի օժանդակություն, եւ 750-ական հազար դոլարի օժանդակություն՝ ռազմական կրթության համար:

Հասարակական

ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՅԸ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼ Ե ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻՆ



Դրա հիմքում հարցերին նրա պատասխանների տրամաբանվածությունն ու հստակությունն են

ՀԱԿՈՒԲ ՉԱԶԻՅԱՆ
Հունիսի 23-ին Ստրասբուրգում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ելույթ ունեցավ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ստաշրջանում, այնուհետեւ պատասխանեց պատգամավորների հարցերին: Նրանցից ըստ երեւույթին պետք է առանձնացնել Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ

Ատկինսոնին եւ Ֆրանսիայի Ներկայացուցիչներ Ռոշբլուանին եւ Սալլեսին, որովհետեւ վերջիններիս հարցերը միտումների առումով գրեթե չեն տարբերվում թուրք պատգամավոր Թեքլիօղլուի, ադրբեջանցի պատգամավորներ Սեյիդովի եւ Յուսեյնովի հարցերից, ինչի մասին թերեւս վկայում է Զոչարյանի պատասխանների տրամաբանական ուղղվածությունը:

Ատկինսոնի հարցին պատասխանելիս ՅՅ Նախագահն ասել է. «Ադրբեջանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի անկախությունը, թե՞ ոչ, դա այլ խնդիր է: Տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող վերաբերել այդ խնդրին, քանի որ Ղարաբաղը երբեք չի եղել այդ տարածքում»: Նա միաժամանակ առաջարկել է հարցը դիտարկել ոչ թե տրաֆարետային մոտեցման տեսանկյունից, այլ՝ իրավական հիմքերի, հաշվի առնելով ԼՂ Հանրապետության գոյությունը, ավելացնելով. «Մեզ դուր է գալիս ազգերի ինքնորոշման սկզբունքը»:

Ռոշբլուանի հարցի առնչությամբ Զոչարյանը նշել է, որ մի քանի տարի է ծախսվել քիվեսթյան համաձայնությունները Նախապատրաստելու համար, որոնք հիմնված էին անմիջականորեն Ֆրանսիայի Նախագահ Ժակ Շիրակի Ներկայությամբ քննարկված փարիզյան սկզբունքների վրա, եւ ընդգծել է. «Մենք փաթեթային լուծման կողմնակից ենք»: Ի պատասխան Սալլեսի՝ Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների հարցի, Զոչարյանը հիշեցրել է. «Մենք Նախապայմաններ չենք դնում»՝ պատճառաբանելով, որ յուրաքանչյուր Նախապայման տանում է փակուղի:

Ըստ երեւոյթին հարցով ՅՅ Նախագահին դիմելիս Թեքլիօղլուն ակնարկել է ՆԱՏՕ-ի ստամբուլյան գագաթաժողովին չմասնակցելու նրա որոշման մասին եւ ստացել հետեւյալ պատասխանը. «Մենք երբեք չենք հրաժարվել Թուրքիայի Ներկայացուցչի հետ հանդիպելուց, ոչ էլ (հարաբերությունների) կարգավորումից ենք խուսափում: Ինչ վերաբերում է անցյալին, չեմ կարծում, որ մեզանից որեւէ մեկն ինչ-որ հրամանով կարող է ստիպել մարդկանց մոռանալ անցյալը: Չէ՞ որ 1915 թ. իրողություն է, կա խնդիր: Անկախության ձեռքբերումից հետո հայ-թուրքական սահմանում առկա են շրջափակումն ու դիվանագիտական հարաբերություններից հրաժարումը»: Այս փաստերն արձանագրելուց հետո Զոչարյանը մատնանշել է. «Եթե դուք կարծում եք, թե առանց ձեզ յուր չենք գնա՝ սխալվում եք, յուր կգնանք, նորմալ զարգանում ենք»:

Ինչ վերաբերում է ադրբեջանցի պատգամավորներին, ապա նրանցից Սեյիդովին ՅՅ Նախագահն ասել է. «Մենք ընդունում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, բայց կրկնեմ, որ ԼՂՀ-ն Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ կապ չունի, որովհետեւ նա երբեք ձերը չի եղել»: Իսկ Յուսեյնովին Զոչարյանը հիշեցրել է Բուդապեշտում հայ սպայի՝ հայ լինելու պատճառով սպանության փաստը, հորդորել է խնդիրների մասին խոսելու քաջություն ունենալ, ապա եւ ավելացրել. «Ինչ վերաբերում է մարտական գործողություններին իմ մասնակցությանը, այո, ես

ծնունդով Լեռնային Ղարաբաղից եմ, իմ երեխաները 1988-ից մանկություն չեն ունեցել, հպարտանում եմ այն արդյունքով, որ այսօր ձեռք ենք բերել»:

Հարցերին ՅՅ Նախագահի տրամաբանված եւ հստակ պատասխանները ի՞նչ տպավորություն են գործել անգլիացի եւ ֆրանսիացի նշված պատգամավորների վրա, դժվար է ասել: Բայց որ դրանք առաջ են բերել թուրք պատգամավորների դժգոհությունն ու ադրբեջանցիներին հավասարակշռությունից հանել են, ակնհայտ է: Համոզվելու համար կարելի է անդրադառնալ Ռոբերտ Զոչարյանի հարցուպատասխանին թուրքական եւ ադրբեջանական թերթերի, ինչպես նաեւ վերոհիշյալ Յուսեյնովի արձագանքին:

Թուրքական թերթերից ՅՅ Նախագահի ելույթին հունիսի 24-ի համարում «Հյուրիթթն» անդրադարձել է «Զոչարյանը համագործակցության կոչ է անում» եւ «Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցությունը բախվում է հայկական Նախապայմանին» խորագրերով, «Ռադիկալը»՝ «Զոչարյանը հանդիպման առաջարկ արեց» խորագրով: Դրանցից թերեւս «Սթարգագետեն» է, որ օգտագործել է համեմատաբար սուր վերնագիր, դա ձեւակերպելով հետեւյալ կերպ՝ «Զոչարյանը հրահրում է»: Խոսքը տվյալ դեպքում Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների եւ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերի առնչությամբ Նախագահ Զոչարյանի հետեւողականությունից բխող նկատառումների մասին է, որոնք թուրքական թերթը հասկանալի պատճառներով փորձում է ներկայացնել որպես սադրանք:

Ինչ վերաբերում է ադրբեջանական թերթերին, ապա դրանցից «Չերկայլն» ՅՅ Նախագահի ելույթին արձագանքում է «Ռոբերտ Զոչարյանը հպարտ է, որ մարդասպան է» վերնագրով, իսկ ԵԽԽԿ-ում ադրբեջանական պատվիրակության անդամ Յուսեյնովը ելույթը համարում է «Զաղաքական անպատկառության ցուցադրում»: Ադրբեջանական թերթի եւ ադրբեջանցի պատգամավորի արձագանքները որեւէ մեկնաբանության կարիք չեն զգում: Պարզապես ասենք, որ մարդասպաններ դաստիարակելը յուրահատուկ է ադրբեջանական ժողովրդին, իսկ մարդասպանին ազգային հերոս հռչակելը՝ նրա տարերքը:

Թերեւս այդ առումով պատահական չէր սուլճայիթյան մարդասպանների հիշատակը հուշարձաններով հավերժացնելու համար Ադրբեջանում, ներառյալ Նախիջեւանը, հանգանակության հավաքը կամ Բուդապեշտում լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին կացնահարած Ռամիլ Սաֆարովի հռչակումը որպես համաժողովրդական հերոսի: Ինչո՞ւ: Որովհետեւ Սաֆարովը, սպանելով հայ սպային, հերթական անգամ ցույց տվեց ադրբեջանցի հրոսակի մարդասպան դեմքը:

Մարդասպանին ազգային հերոս հռչակելու համար բարոյական ի՞նչ նկարագիր պետք է ունենա ադրբեջանական ժողովուրդը՝ թող ադրբեջանցիները դատեն: Հարցը, սակայն, սոսկ ժողովուրդը չէ, այլ Ադրբեջանի ինչպես պաշտպանության, այնպես էլ արտաքին գործերի Նախարարություններն են: Դրանցից առաջինը լկտիաբար արդարացում էր սպանությունը,

երկրորդը՝ պաշտոնապես մարդասպանին պաշտպանում: Այդ ընթացքում Եվրոպայի խորհրդում Ադրբեջանի դեսպան Աքշին Մեհդիեղը Եվրոպացի խորհրդականների առջեւ հայտարարում էր. «Քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծվել, հայերը հանգիստ քուն չեն ունենալու»: Այլ կերպ՝ ադրբեջանցի ժողովրդի նման Մեհդիեղը եւս հերոսացնում էր մարդասպանին: Մինչդեռ մարդասպաններին հերոսացնելը պետք է յուրահատուկ լիներ հրոսակներին: Քանի որ մարդասպանին հերոսացրել է նաեւ Եվրոպայի խորհրդում Ադրբեջանի դեսպանը, ուստի նա չպետք է տարբերվի ադրբեջանական մարդասպաններից:

Մշակութային ՀԱՅԵՐՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԿԻՆՈՅՈՒՄ

Նորանցիկ ամռանը Իրանի կինոթանգարանը, ի դեպ, արդեն երկրորդ անգամ, Թեհրանում կազմակերպել էր «Հայերը եւ իրանական սինեման» ցուցահանդեսը, ինչպես նաեւ նույնանուն վերնագրով կինոշաբաթ (հուլիսի 10-16): Այս ուշագրավ ձեռնարկումները հովանավորել են, ի թիվս այլոց, Հայոց թեմի խորհուրդը, «Ֆարաբի Սինեմա» հիմնադրամը, «Ալիք» օրաթերթը, Իրանի կինոարխիվը, իսկ աջակիցներն են դարձել Անահիտ Աբադը, Սուրիկ Աբուսայանը, Արմեն Պետրոսյանը, Հենրիկ Խաչատրյանը, Յուրիկ Զարիմ Մասիհին, Ռոբերտ Սաֆարյանը եւ Արսինե Մարտիրոսյանը:

Ցուցահանդեսում, որը ձեւավորել է Մոստաֆա Ղաշտին, տեղ են գտել իրանական կինոյում հայերի գործունեությունը հավաստող բազմաթիվ հետաքրքրական վավերագրեր՝ լուսանկարներ, ազդագրեր, հողվածներ, այլեւայլ նյութեր:

Բազմազան ու բովանդակալից ծրագիր է ընտրվել եւ կինոշաբաթի համար, որի շրջանակներում ներկայացվել են իրանական կինոյի հիմնադիր Ավանես Օհանյանի, հայտնի ռեժիսորներ Սամվել Խաչիկյանի, Արբի Հովհաննիսյանի գեղարվեստական կինոնկարները, մի ամբողջ շարք կարճամետրաժներ, վավերագրական ու մուլտիպլիկացիոն գործեր, Լորիս Ճգնավորյանի, Անդրե Արզումանյանի եւ Վարուժանի երաժշտությամբ նկարահանված ֆիլմեր: Կինոշաբաթի ավարտին ցուցադրվել են հատվածներ հայազգի դերասանների եւ դերասանուհիների մասնակցությամբ 1954 -1998 թթ. Էկրան բարձրացած ժապավեններից. խոսքն իրանական կինոյում ճանաչված այնպիսի անունների մասին է, ինչպիսիք են Արմանը, Վահան Աղամալյանը, Գրեգորի Մարկը (Մարկոս Գրիգորյան), Վիգենը, Վիկտորյան, Մանվել Մարությանը, Իրեն Չազյանը, Ափիկ Յուսեֆյանը, Աննիկ Շեֆրազյանը, Մահալա Պետրոսյանը, Լորիկ Մինասյանը:

«Հայերը եւ իրանական սինեման» ցուցահանդեսի եւ կինոշաբաթի առթիվ Թեհրանում հրատարակված եռալեզու (պարսկերեն, անգլերեն, մասամբ եւ հայերեն), պատկերազարդ կատալոգը այնքան հարուստ բովանդակություն ունի, հագեցած է եւ հիմնավոր, որ ինքնաբավ գրքի արժեք է ստացել: Այստեղ ընդգրկված են իրանական կինոյում հայերի ներկայության ժամանակագրությունը՝ անցյալ դարասկզբից մինչեւ 1993 թվականը, իրանահայ նշանավոր կինոգործիչների կենսագրականները, իրանական կինոյում հայերի ներդրումը լուսաբանող ծավալուն հարցազրույց Արբի Հովհաննիսյանի, Չավեն Ղուկասյանի եւ Ռոբերտ Սաֆարյանի հետ եւ բոլոր այն հայազգի դեմքերի անվանացանկը, ովքեր այս կամ այն կերպ առնչակից են Իրանի կինեմատոգրաֆին: Ահա հիշարժան փաստերի մի ամփոփ ընտրանի, որ գետնովել է «Հայերը եւ իրանական սինեման» հրատարակության մեջ:

Իրանում կինոյի երեւան գալուց ի վեր հայերը խիստ արդյունավետ դեր են խաղացել կինոարվեստի արտադրության մեջ:

Օրինակ, առաջին աշխարհագրական ֆիլմերը նկարահանել են հայերը՝ Գեւորգ Եսմայիլովը՝ 1909-ին:

Հայերն են հիմնել առաջին կինոսրահները (ժամանակակից տեսքով) մի շարք քաղաքներում, իսկ Թավրիզի «Սուլեյ սինեման» հիմնել է Ալեք Սագիսյանը 1917-ին:

Հայերն են ստեղծել նաեւ կինոուսուցման առաջին կենտրոնները երկրում. Կինոդերասանի դպրոցը հիմնադրել է Ավանես Օհանյանը 1930-ին:

Հայերն են նկարահանել առաջին գեղարվեստական ֆիլմերը՝ «Աբին եւ Ռաբին» (1931) եւ «Հաջի աղան՝ կինոդերասան» (1934), որոնց երկուսի ռեժիսորն էլ Ավանես Օհանյանն է:

Հայերն են ձեւավորել կինոցուցադրման առաջին շենքերը. «Դիանա» (Ներկայումս՝ «Սեպիդե սինեմա», 1939) եւ «Մետրոպոլ» (Ներկայումս՝ «Ռուդակի սինեմա», 1945) կինոթատրոնները ձեւավորել է Վարդան Հովհաննիսյանը:

Հայերը՝ Միշա Կիրակոսյանն ու Հայկ Օջաղյանն են առաջին ազդագրերի ու պլակատների հեղինակները:

Մեծ կինոստուդիաների մի մասը հիմնել են հայերը. «Դիանա Ֆիլմ»-ը՝ Սանասար Խաչատրյանը 1950-ին, «Ալբորգ Ֆիլմը»՝ Սիմիկ Կոնստատինը, Ջոնի Բաղդասարյանը եւ Վահան Թրփանչյանը 1951-ին, իսկ «Ազիլ Ֆիլմը»՝ Ժոզեֆ Վաեզյանը 1957-ին:

Հայերն են լույս ընծայել ամենաերկարակյաց կինոպարբերականը. Պարույր Գալստյանը՝ «Սեթար Սինեմա/Ֆիլմ Սթար»-ը 1954 -1978թթ.:

Հայերն են ստեղծել ամենաշահութաբեր կինոժապավենները՝ Սամվել Խաչիկյանի ֆիլմերը՝ «Շիրազի աղջկանից» (1954) մինչեւ «Արծիվները» (1985):

Հայերն են նպաստել կինոկրկնօրինակման մասնագիտության զարգացմանը. Ալեքս Աղաբաբյանը գործուն մասնակցություն է բերել օտարերկրյա ֆիլմերի պարսկերեն կրկնօրինակմանն Իտալիայում:

Հայերը՝ Գուրգեն Գրիգորյանցը, Ռուբիկ Մանսուրին, Ռուբիկ Չաղորյանը եւ այլք ծանրակշիռ հիմքեր են ստեղծել երկրում կինոտեխնիկայի համար:

Հայերը Իրանի կինոարխիվի հիմնադիր անդամների թվում էին. Չավեն Հակոբյանը՝ 1958-ին:

Հայերն են գրել առաջին կինոերաժշտությունը. Լորիս Ճգնավորյանը 1963-ին հեղինակել է «Օձի կաշի» ֆիլմի երաժշտությունը:

Հայերն են ժամանակին նկարահանել «նոր ալիքի» մի շարք ֆիլմեր, որոնց թվում է Արբի Հովհաննիսյանի «Աղբյուրը» (1972):

Հայերն են ստեղծել «Ֆաջր» միջազգային կինոփառատոնի ամենափառաբանված ֆիլմը՝ Վարուժ Զարիմ Մասիհիի «Վերջին արարը» (1991):

ՉԱՎԵՆ ԲՈՅԱԶՅԱՆ

Տիեզերական հայ մըն է», ասաց լիբանանահայ բանաստեղծ Սարգիս Կիրակոսյանը: Դեռեւս 1960-ականներին, երբ Հայաստան-սփյուռք հարաբերությունները որոշակի գաղափարախոսական, քաղաքական պայմանականություններ ունեին, Թորոս Թորանյանը կապեր հաստատելու առաջին կամուրջներից էր: «Երիտասարդ մի ժուռնալիստ էր, որը «Գարուն» ամսագրում համարեհամար բացահայտում էր այն, ինչ անհայտ էր մեր սերնդին, ասաց կինոգետ Դավիթ Մուրադյանը: Մեր սերունդը Թորոս Թորանյանի բանալիով է բացել սփյուռքի դռները իր մտքում: Դա հայկական լրագրության համար թարմ ոճի մի հրաշալի ոսկեդեղին բանալի էր»: Լեւոն Անանյանը մեծապես գնահատեց Թորանյանի դերը 1990-ականներին «Գարունի» գոյատեման գործում, երբ սփյուռքում վերջինս ամսագիրը տնտեսուն քարոզում եւ բաժանում էր:

Թորանյանին ճանաչողները, նրա գործին տեղյակ մարդիկ հավաստում են, որ եթե մեկ-երկու տասնյակ Թորանյաններ ունենանք, կարող ենք ասել, որ սփյուռքը փրկված է: «Սփյուռքը նախ եւ առաջ գաղափար է, այն չունի հող, չունի այն ֆիզիկական կենսատարածքը, որ կոչվում է հայրենիք, ասաց Դավիթ Մուրադյանը: Այդ գաղափարը կերտող, ապրեցնող, միմյանց փոխանցող մարդիկ, անհատականություններ են պետք, էներգիայի աղբյուրներ են պետք: Հենց Թորանյանի նմաններն են, որ ստեղծում են այն, ինչ կոչվում է հայոց սփյուռքի հոգեւոր եւ մտավոր տարածություն: Երբ այդ ներուժը բացակայի, մնացած հարստությունները կդառնան անիմաստ, դրանց համար այլեւս չի լինի հասցե: Այդ հարստությունների իմաստը մեր հայ իրականության մեջ որոշվում է սփյուռքի մտավոր համակարգով, իսկ այս մտավոր համակարգի ճարտարապետներից, սեւագործ բանվորներից, որմնադիրներից, գեղանկարիչներից մեկն է Թորոս Թորանյանը»: Կինոգետը ցանկություն հայտնեց ի դեմս Թորանյանի խոնարհվել հայ այն բոլոր մտավորականների առջեւ, որոնք մինչեւ այսօր հայոց գրիչը պահում են սփյուռքի սպիտակ էջերի վրա:

Բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Թորոս Թորանյանը սփյուռքի ամենատարբեր պարբերականներում ներկայացրել է 1960-90-ականների սփյուռքի եւ Հայաստանի գրական-մշակութային մեր բոլոր նշանավոր, երեւելի անհատականություններին: Վերջին չորս հրատարակությունները նույնպես այդ նպատակին են ծառայում: «Տիեզերքի խուզարկուն Սուրիոյ մէջ» գրքում ներկայացված են նշանավոր աստղագետ Գրիգոր Գուրգադյանի՝ Սիրիայում ունեցած հանդիպումները, իսկ «Երկիրներ եւ մարդեր»-ը քսանհինգ երկրների հայ նշանավոր գրողների, արվեստագետների, մտավորականների դիմանկարների ժողովածու է: Թորոս Թորանյանն այն համարում է մեր ժողովրդի դեռեւս շարունակելի վեպը:

ՐԱՄՍՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱ ՄՈՒՈՐԱԿԻ ԱՄԵՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ Է, ՈՒՐ ՀԱՅ ԿԱ

Թորոս Թորանյան՝ գրող, հրապարակախոս, ազգանվեր հայ մարդ

Անցյալ շաբաթ «Իմ Ռուբեն Սեւակը», «Չրոյցներ Կարպիս Սուրենյանի հետ», «Տիեզերքի խուզարկուն Սուրիոյ մէջ» եւ «Երկիրներ եւ մարդեր. վեպ բազմահարկուր հերոսներով» գրքերով Թորոս Թորանյանը լրացրեց իր գրական-հրատարակչական գործունեության 190-րդ հատորը: Հայաստանի գրողների միության կազմակերպած գրքերի շնորհանդեսին մասնակցում էին, Թորանյանին շնորհավորում ու ստեղծագործական կյանքում իր թողած գրական ժառանգության մասին խոսում էին ընկերները, մտերիմները: Վերջին տասնամյակներում Հայաստանում սփյուռքի եւ սփյուռքում Հայաստանի «դեսպանի» մասին շնորհանդեսի մասնակիցները միայն երախտիքի խոսք էին ասում, միայն գնահատում Թորանյան գրողի, մտավորականի հայրենանվեր գործը:

1990-ականներին՝ մութի ու խավարի տարիներին Թորանյանի ներկայությունը Հայաստանում ընկերներն իբրեւ լույսի շող են գնահատում: «Նա գալիս էր Հայաստան՝ մեզ հետ ապրելու անկախ Հայաստանի դժվար կենսագրությունը: Նրա մեջ կարծես ներքին այրման մի հավերժական շարժիչ է աշխատում, երբ հարցը վերաբերում է իր հայրենիքին, ժողովրդին, իր ազգային մշակույթին», ասաց գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը:

Ընկերների գնահատմամբ՝ Թորանյանը այնտեղ է, ուր հայ կա: «Իր ձայնը մեկ կլսես Չինաստանեն, մեկ՝ Բեյրութեն, մեկ՝ Սինգապուրեն ու Հայաստանեն: